ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան **17 փետրվարի 2014թ.**

«Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲԸ-ն տեղեկացնում է, որ «Գարանտ Ինշուրանս» ապահովագրական ՓԲԸ և «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲԸ միջև 01 հոկտեմբերի 2013թ. կնքված ապահովագրական պորտֆելի փոխանցման պայմանագրի համաձայն, ՀՀ Կենտրոնական բանկը տվել է իր նախնական թույլտվությունը՝ «Գարանտ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի ապահովագրական պորտֆելը «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ փոխանցելու վերաբերյալ:

Ելնելով վերոհիշյալից և ղեկավարվելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 127-րդ հոդվածով, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ, որպես ստանձնող ընկերություն, տեղեկացնում է «Գարանտ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի ապահովադիրներին /հետագայում՝ Ապահովադիրներ/, որ այսուհետ նրանց և «Գարանտ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի միջև կնքված ապահովագրության պայմանագրերով/վկայագրերով Ապահովագրող է հանդիսանալու «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ՝ Ապահովագրողի բոլոր իրավունքներով, և կրելու է Ապահովագրողի համար ՀՀ օրենսդրությամբ և պայմանագրով/վկայագրով նախատեսված բոլոր պարտավորությունները:

«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն ողջունում է «Գարանտ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի բոլոր ապահովադիրներին և ուրախ կլինի համագործակցել վերջիններիս հետ:

Միաժամանակ, ցանկանում ենք տեղեկացնել, որ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ հաճախորդ դառնալու ցանկության բացակայության դեպքում, Ապահովադիրները իրավունք ունեք լուծելու իրենց և «Գարանտ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի միջև կնքված ապահովագրության պայմանագրերը/վկայագրերը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալով պայմանագրի չլրացած ժամկետի ապահովագրավճարները: Ապահովագրության պայմանագրերը/վկայագրերը լուծելու նպատակով Ապահովադիրները պետք է անձնագրով, ապահովագրության պայմանագրի/վկայագրի իրենց օրինակներով, ներկայանան «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ, ք. Երևան, Հյուսիսային պող. 1 հասցեով՝ ծանուցումը ստանալուց հետո 30 /երեսուն/ օրվա ընթացքում:

«Գարանտ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի հետ կնքված ապահովագրության պայմանագրերով/վկայագրերով պարտքերի առկայության դեպքում խնդրում ենք Ապահովադիրներին դրանք փոխանցել «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի 1570003731650100 հաշվարկային հաշվին՝ փոխանցելիս պարտադիր նշելով ապահովագրության պայմանագրի/վկայագրի համարը:

Մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք զանգահարել (+374 10) 59 10 10 հեռախոսահամարով:

Մեր աշխատանքային ժամերն են՝ երկուշաբթիից ուրբաթ՝ 9:00-ից մինչև 18:00-ն, ընդմիջման ժամերը՝ 13:00-14:00, իսկ շաբաթ օրը՝ 10:00-ից մինչև 18:00: